

Ըստ առաջին համարի՝ կամ թէ որեւէ օտար բառի մը հետք։ Խոչ ալ ըլլայ՝ մը խիրը կամ մերձաւոր իմաստ մը միայն կրնոյ ունենալ։ Թէեւ ասկէ մինչեւ Հեմենտ բաւական ուսում մը կայ։ Կարելի է գուշակել թէ ինչպէս կապած է յիշեալ բառին հետ Հեմենտը։ Ասոր այլեւայլ տեսակաց մէջ արդէն Ք կը նշանակէր (Ա, 408) թէ «Հաղախն որ ի գործ ածի առ ի զտել գերկաթ կամ առ ի գործել զարդովատ, արուեստական, կազմի ի փայտեղէն ածխոյ մանրելց, ընդորում խառնեն զ¹/10 կըոյ նորա ճոխիք, եւ սակաւիկ մի աղ ծովային»։ Այս «մոխիրն է շլան բառին սեմենտի փոխուելուն պատճառը»։ Անշուշտ կարելի է լեզուի մը հին ու անդործածական բառերն առեւեստիփատական կարեւոր ու մերձաւոր բառերու մտօք գործածել, երբ հարկ մը կայ։ Բայց նաեւ տարակոյս չկայ թէ Բառագիրքը մը գործածողն ալ իրաւունք ունի բառի մը ձեւին ու իմաստին հարազատութեան մասին ապահով ըլլալու։ Ուստի որեւէ փոփոխութիւն գոնէ պատշաճ կերպով (խաչանիշ, աստղանիշ եւն) մատնանիշ՝ եղած ըլլալու է։ Ծեմենտի գոնէ մերձաւոր մտօք ունինք ժողովրդական այլեւայլ բառեր, օրինակ՝ Ախանով, եւուար եւն։ Աւելի կարեւոր էր «կրալիւս», եւ նման բառերու տեղ՝ կարձ ու յարմար բառ մ'ունենալ գործնականին կարեւոր սիմենտի համար, եւ աւելի եւս բետոնի համար։

Այս վերջնոյն համար Ք. ի դրած “բլուրոն”
տառադարձութիւնը տղեղ է եւ անյարմար ալ ։
Գեղեցիկ բառ մը չէ նաեւ և ի յօրինած “խօն”

¹ Համար, Ամպավանք, էջ 517; Համար, Նախի Շահ (Քողոված, անդ, 508), իսկ Համար (Ճիշտ, Ամպավանք, էջ 833 համար, Շահ, անդ, 818) եւ Նախիներ:

2 Երպար Սամազ կամ Նելլիք կը նշանակէ “աղբիոյ” Կանակութիւնը կրնայ յարմարիլ բայց ձեւը դժուարութիւններ կը յարուցանէ (Հմման Հայ Ընկալ) :

Հայոց բարեկարգութեան (Բառացիքը և արքան. Հայ և
ինտուսիան. Ա. Ենես. 1837) առ Ելի զգուշութեամբ նշանակած
է՝ “Ըստն, ինչու մասին, ըստը” — Առձեռն բառարան
(Ա. Ենես. 1865)՝ “Ըստն, մասին;” Ոչ ամեն բառարան ըն-
դունած է այս բառը:

4. Համար. Այսպահանք, եջ 13 “Աթուհող” քրծաբար կուտածք քարի հաղանան մանրութը, որ դարբինները ածուածն չեն շիկացած երկաթի քայ, որպէս զի երկաթը չայրուի, — եջ 176 “Երաժոր”, հայացած որբինների (քարացած խեցեալ սեան) կառներ, որոնցով դարբինները երկաթ եռացն առաջ, կարմրացնուած են (այսպէս եւ գուլ, եւ ուղարկուած առովի մեջ դրած երկաթի շիկանալը), և ատացնուած երկաթը շիկացնելու եւ առաջընելով իբրար մեռցնելու; Թուղուած ուրիշ ուրիշ բառերը (Հման. Զօր, Կարեն ե. կ.), Երաժոր մասին հմտն. § 8:

5. Ք. (Ա. 267) «բլետոնի ձեռն առաջ կ'ըսէ» «յանդ զիական բառէն bletong». Եայց այս հին ձեռով բառու այլ եռ չի գտնուիր անգղ. բառարանաց մէջ. (Ձ ալ չունիր) Եթէ փոխ առնուլ պէտք է առնլու և ուղղակի բերան «բլետոնի կը գրէ նաեւ Ե. (Բառագիրը Եւն, 477):

(Հմատ. бетоннаге “խճօնումն”, бетоннер “խճօնելն”, бетонnière “խճօնոցն”): Իբր գրաւոր բառ՝ յարմարագոյնն է 2.ի գրած “Կը այսլու”։ Բառ մը՝ որ համեմատ է նախնեաց այս բառին գործածած իմաստին, եւ ինչպէս նոր քննութիւնք ցուցուցին՝ մեր նախնեաց շինութեան կերպն ալ տեսակ մը բետонnage էր։ Բայց բաց ի ասկէ եւ նորակերտ իւղիւն բառէ աւելի կարճ եւ յարմար բառ մը բաղձալի կը մնայ։ Իսկ սկզբան համար ունինք ժողովրդական յարմար բառ մը՝ Լոկոն, “շաղախ, զանգուածն ընդհանուր նշանակութեամբ, որ կը գործածուի արդէն երեք տեսակ շաղախի համար, որոց երրորդը՝ “Կիր ու աւազ, որ իրար հետ խառնելով թափում են կրաշէն պատերի մէջն եւն։ (Միւսներու մասին տես Ամստենդամի, էջ 256)։ Պէտք է այս բառն օգտագործել։

(Ծայրահակելիի:

S. B. SUEBUU

ՆՈՐ ՄԱՑԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԻՏՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ Լ. ԶՈՒԹԻ “ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾ-ՆԵՐ”, ԳՐԱՄԱՅԻ ՄԱՍԻՆ. ՊԱՏՄԱԿԱՆ, ՑԵՂԱ-ԳՐԱԿԱՆ, ԿԵՆՅԱԳՐԱԿԱՆ ՏԵԽՈՎԿԵՐ

(Տարութեակութիւն :)

6. Բ. տեսաբան Յուլի: — Իշխանը
նուիրում է Տիրամօր տաճարին կաղնի դուռ,
վարագ յըր եւ ամեն տարի տասը չափ սպիտակ
ցորեն (Էջ 17): — Պատմական ճշմարտութիւն
է, որ Աշոտ իշխանը այցելել է Սեւան, Մաշտոց
Վանահօր նուիրել է կենաց փայտ եւ մի քանի
գիւղ վանքի պահպանութեան համար: Կաղնի
դուռ նուիրողը եղել է Քուրդ իշխանը այն էլ
ժբ. դարում. այդ իշխանը թաղուած է Առա-
քելոց վանքի գաւթում, որի տապանաքարի վրայ
գրուած է Հետեւեալը. “ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍ
ՊԱՐՈՆ ՔՐԴԻՆ, Զաւանական է, որ այս իշ-
խանը Սեւան է առանձնացել. իշխանների եւ
թագաւորների առանձնանալու գէպքեր միջն
դարում յաճախ է եղել. եւ մենաստանում էլ
մեռել է ու թաղուել: Դրամայում յիշուող
Ճգնաւորի կենցաղի այդ մասը, ուր Ճգնաւորը
երբեմն իշխան է եղել, երկիրներ է ունեցել
(Էջ 45—48), որոշ չափով մօտենում է Քուրդ

իշխանի կեանքին, որը, ինչպէս ասացի, հաւանորէն նոյնպէս առանձնացել է մենասուանում եւ գուցէ ճգնել:

7. Բ. տեսարան 5ըդ: — Ղազար վանականը ասում է, որ Աբեղան, որ ջուրն էր ընկել եւ իշխանի Սեդա աղջկանը ջրից հանել, պիտի շատ ապաշխարէ, որովհետեւ ձեռք է տուեր կնկայո (էջ 20): — Այս իրական ըմբռում է եւ պատմական. Սեւանայ անապատը կնկայ մուտքը արգելուած էր, ինչպէս եւ արգելուած էր լիմ եւ կտուց անապատները. Մաշտոց Վանահայրը արգելում էր Սարիամ իշխանունուն կղզի գնալ տաճար շինելու, մինչեւ որ տեսիլք երազ տեսադ ու այսուհետեւ թոյլ տուեց:

Մինչեւ Ներսէս Ե. Աշտարակեցի կաթողիկոսը կնոջ Սեւան մուտքը արգելուած էր: Հերկոսը կնոջ Սեւան մուտքամբ անապատում յանցանք տեւապէս կնոջ տեսնելը անապատում յանցանք էր, ուր մնաց որ նրան գրկէր, թէ կուզ ջրի մէջ եւ աղատելու նպատակով: Միջին դարու Վանականը շատ խստապահանջ էր եւ բնականաբար իր ըմբռումը պիտի յայտնաբերէր: Հեղինակը իր ըմբռումը պիտի յայտնաբերէր: Հեղինակը այդ միտքը գողովիկ ձեւով է յայտնում օդտուելով յարմար առթից:

8. Գ. տեսարանում՝ արեղայի նկարագրուած խուցը պիտի համեմատել այժմ Առագելոց տաճարի արեւմտեան կողմը գտնուող քերց տաճարի արեւմտեան կողմը նուուղերի հետ, որոնք մօտաւորապէս նոյն կազմակերպին ունին, կայ մի հատ կանգուն խուց, մութիւնն ունին, կայ մի հատ կանգուն խուց, մնացածները քանդուած են. այդ խցում ապրել է Սեւանի յայտնի վերջին ճգնաւոր Մելքոնը: Խուցը մի նեղ պատուհան ունի: Հեղինակը դրում է որ խցում եղած սեղանի վրայ կար եւ փայտէ խաչ: Հայ վանականները սովորաբար իրենց սեղանի վրայ խաչ դնելու սովորութիւն իրենց սեղանի վրայ խաչ դնելու սովորութիւն իրենց սեղեցել: Անհաւանական է եւ այն որ խցում մահճակալ լինէր, որովհետեւ անապատական ները սովորաբար գետնախշտի են եղել. փռել են գետնին խսիր, վրան թաղիք եւ պատկել, իսկ գերեկը ժողովել են այդ ամէնը եւ գրել մի անկիւնում:

9. Գ. տեսարան 1ում յիշուած կըր վանականը, որոշ չափով իրական անցեալ ունի: Սեւանում միաբանները յիշում են ժԹ. գարում ապրով կըր կարապետ եղբայր մահտեսուն, որը բարի, քրիստոնեայ մարդ է եղել, ժամերգութիւնը, սաղմոսները, աղօմքները անգիր իմացող: Հեղինակը կըր Վանականին վերագրում է՝ մի ինչ որ ուսման սէր, որ անցեալում ունեցել է եւ գրա աղդեցութեան տակ կուրացել, վանք է մտել (էջ 104—105): Որքան ու-

սումնասիրեցի ոչ պատմութեան մէջ կար նման դէպք, ոչ միաբաններն են յիշում: Վերջին ժամանակներում եղել են սիրուց հիասթափուած մարդիկ, որոնք Սեւան են առանձնացել, բայց ոչ կըր Վանականի ըմբռումով:

10. Գ. տեսարանի 1.ում կըր վանականը պահանջում է որ աբեղան, որը Սեդայով արդէն տարուել էր, գնայ վանահօր մօտ եւ խոստովանի: Այս համապատասխան է անապատական կեանքին: Որեւէ յանցանք գործող մի կրօնաւոր, ըստ անապատական կանոնի, պիտի գնար վանահօր մօտ խոստովանէր: Այս հիման վրայ է եղել նաեւ այն սովորութիւնը, որ անապատում հերթավարը — աւագ երիցութիւն անող կրօնաւորը՝ ամէն առաւօտ ծնրադիր ի լուր բոլոր վանականների Սեղան, անգիր ասել է, մի բան, որ Սեւանում մինչեւ վերջն էլ պահւում էր:

11. Գ. տեսարան 3.ում: — Աբեղան յայտնում է, որ իր աշխարհքը վանքն է եղել միշտ, քանի խելքը կը համնի (էջ 27): — Հաւանական է, քանի որ հնում սովորութիւն էր, ծնողները իրենց երեխաններին 5—6 տարեկան հասակում տանում էին որեւէ վանքի նուիրում. եւ երեխան, որեւէ ծեր վանականի հսկողութեան տակ մեծանում էր ու վերջը կրօնաւոր դառնում:

12. Բ. արարի Ա. տեսարանի նկարագիրը, որ ծառեր կան եւ աղբիւր, իրական է (էջ 31): Այժմ կան ծառեր եւ հին միաբաններն էլ, ասեն որ եղել է կղզում նաեւ աղբիւր, բայց յետոյ աղբիւրը լցուել է եւ այլ եւս չի գործում: Տեսարանում նկարագրուած միաբանների խօսակցութիւնը սատանանների մասին համապատասխան է միջնադարի կրօնաւորի ըմբռունման: Յիրաւի միջին դարում սատանան ստէպ երեւում էր կրօնաւորի եւ աշխարհականի. Վարդ Արբոցում կան պատմուած շատ դէպքեր թէ ինչպէս սատանանները փորձել են ճգնաւորին զանազան ձեւերով, յատկապէս կնոջ պատկեղազան ձեւերով. այդ տեսակէտից հարուստ է բով երեւալով. այդ տեսակէտից հարուստ է բնակուն Անապատականի վարքը: Սեւանում գեռի դարու սկզբում եղել է մի միաբան, աղզով քուրտ, յետոյ մլլուտուած հայ լուսաւորչական եւ ասրիններ շարունակ Սեւանում ապրած, ապա միաբան դարձած եւ 1892—1894 Սեւանի վանահայր եղած Գրիգոր Ա. ը, որին քուրտ Գրիգոր Ա. էին անուանում. սա, ըստ միաբանների տեղեկութեան, ամէն գիշեր քնելուց առաջ ծուցից հանել է Յովակիմայ եւ Աննայի մասունքը, խաչակիքել է խցի չորս կողմը, ապա փիլոնը թա-

իմահարելով իրը թէ սատանաներին դուրս է արել սենեակից եւ ապա պառկել քննլու:

13. Բ. արարի Բ. տեսարանը: — “Ժայռերուն մէջ ծովափի մը կտորը: (Էջ 39), միգանուշների տեսարանը յարմարում է կղզու այժմեան հարաւային մասում ծովափի այն տեսարանի, որտեղ գտնուում են ճնաւորների խցիկները (այժմ քանդուած): Այդտեղ կան երկու ժայռեր ծովի ափին. ափի աւազուտը նուրբ, մանր աւազից է: Այդ կողմերում այժմս էլ լաւ սունկեր են բուսնում, ինչպէս այդ ասում են Սիմոն եւ Ադամ Վանականները (Էջ 53—55), որոնք այդ հեռու կողմերն էին եկել սունկ հաւաքելու: Ճիշտ է եւ այն նկարագրութիւնը, որ այդ տեղը կղզու ամենահեռաւոր տեղն է եւ հասակաւոր մարդկանց համար այդ ափը իջնելս յիրակի “դժոխքի ճամբայ է” (Էջ 53):

(Շարունակական:)

Pessimist.



ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ՍԱՐՈՒԻՆԸ ԽՈՐԴՀԱՅԱՐ ԱԼՀԵԼՆ Եւ ԻՐ ԳԱՂՄԱՆԻՔԸ,
Կ. ՊՈՂԱԲ ԲԱՅՐԱՐԻՔ, ՎԻԽՆՆԱ, ՍԻՄԹ. ՏԱ. 1924,
ԳԻՒՆԸ՝ 1 ՊՈՂԱԲ:

Խորհրդաւոր — — գիրք մը՝ 343 էջերով:
Գիրքս վէպ մըն է՝ իրականութեան առնուած: Այս
վէպին մէջ երկու իրականութեաններ կը զանա-
զաննեք:

1. Վէպին հերոս՝ Արսէն Սարունի, զար-
մանալի նմանութեամբ՝ կը հաղնի վիպաղրին ձեռօք՝
նյոն ժամանակին իրերայաջորդ գէպէքերու օղակներէ
հիւսուած հիւսկէնն, այնպէս որ մինչեւ որոշ հէտ
մը — օր. 1908, Յուլիս 11, եթէ իւր անուան նոտրա-
դիր եւ պարզ մասերու մէջ փոքրիկ փոփոխութիւն
մը ներմուծուի, կ'ունենանք քաջածանօթ գրա-
դէտը, հեղինակն ուրիշ 4 երկերու ալ . . .: Այն-
պէս մէծ է այս նմանութիւնն, որ իւր վարժարանա-
կան կեանքն (Էջ 21, 23, 25), ապագայ Ալեքսան-
դրեան (Էջ 27), recto Ալեքսանդր Մանթ . . . եան
հաստատութեան մէկ ադրեցիկ պաշտօնավարու-
թիւնն, թբքահպատակ յետոյ ուսուահպատակ քա-
ղքը (Էջ 26) եւն իրականութեան ամենայն հաւա-
նականութիւն կու տան զինքն իրը իւր վէպին հե-
րոսու նկատելու . . .:

2. Երկրորդ իրականութիւնը պիտի ըլլար
Օր. Բորեսեան . . .

Բայց անցնիք համառօտիւ վէպին նիւթը
տեսնելու:

Կաւկասաբնակ Արսէն Սարունի կ. Պողիս կու-
դայ եւ կը ծանօթ անայ Օր. Բորեսեանի հետ:
Վէպին հերոսուհին դաւանափոխ կ'ըլլայ՝ իւր առաջ
կրթութեան հետեւութեամբ եւ — իրը թէ բնածին
վախէ դրդուելով վերջին ժամուն կը հրաժարի
իստալացւոյ մը հետ ամուսնանալէ: Սարունի լրա-
գրաց միջոցաւ կը տեղեկանայ տեղի ունեցած նշա-
նախօսութեան եւ որշուած ամուսնութեան պատ-
րաստութեան, բայց անգիտակ հերոսուհիոյն հրա-
ժարումէն, տիրաթախիծ ակամայ կը ստիպուի ժա-
մանակ մը աւաղել իւր՝ առ դուրս հասեալ, բայց
յանկարծ կորուսեալ երջանկութիւնը: Ըստ պա-
տահան կը սիթափի իւր անդիտութենէն եւ կ'իմա-
նայ թէ Օր. Բորեսեան ազատ է: Ուրեմն վերստին
կը սկսի իւր հետապնդումները, մինչեւ որ Օր. Բորե-
սեան երկրորդ անգամ ըլլալով՝ ամէն յուսատու
հրապարներով ու նազանքներով՝ վէպին հերոսը
կաշկանդելէն ետքը՝ պատճառ կ'ըլլայ անուղղակի
կերպով Սարունին տեղեկացնելու, թէ անհնարին
իւր ամուսնութիւնը . . . թէ ինչո՞ւ . . .

Ահա այս պարագան է որ կու տայ վէպին իւր
հետաքրքրութիւնը:

Վէղկան մը ձեռքը խնդրելն ու մերժուիլը շատ
սովորական երեւոյթ մըլլալուն պիտի չունենար
այն ազդեցութիւնը, զոր հեղինակը դիտցած է տալ
իւր վէպին նորահնար խորհրդաւորութիւն մը,
միտիկութիւնը մը նկատելով Բորեսեանի չկամէու-
թիւնը: — —

Ներէ թող մեզի յարդելի վիպագիրն եթէ
այս շկամեութեան չկարենանք իրական պատճառ
աղջկան խորհրդաւորութիւնն նկատել:

1. Վէպը ծայրէ ծայր հետաքրքրութեամբ՝
կարգալէն ետքը, աւելի հաւանական կը զտնենք՝
բարեկամ բժշկին պնդումը (Էջ 334) թէ “ախտա-
բանական հերեւոյթ մըն է Օր. Բորեսեանի չկա-
մէութիւնը, կամ աւելի ճիշտ՝ “հիստէրիկ անորո-
շութիւն”, մը, եւոչ կընական ըմբռնմամբ՝ ձմարիտ
խորհրդաւորութիւնը մը: Կրնայինք՝ եթէ օգտակար
դատեինք, աւելի մանրամասնաբար մեկնաբանել
այս կէտը, եթէ Ո. Ցովհաննէս Խաչեանի (Ծ
Ծրբանական խորհրդաւորութեան մէջ:

Ի զուր է այս գէպէքի մէջ profaner ընել
“Մանուկ Ցիսուսի Թէրէզը (Էջ 341), Ա. Ռոզան,
Մարդարիտանն եւն յիշելով:

Հեղինակին ըլլբռնել ուզած խորհրդաւորու-
թիւնն հն ծագում կ'առնու, ուր ներանցնցեալ
կեանք մը չի գտներ գոհացում երեւանուներու մէջ
եւ կը գառնայ հոգևով ու սիրով առ երինաւոր . . .
“գեղեցիկ զգեստներու, զարդերու, պերճանք-
ներու”, եւն սիրով տողորուած արարած մը չի կրնար
“Մանուկ Ցիսուսի Թէրէզին, հետ համեմատուիլ . . .:

2. Օր. Բորեսեանի ամուսնութեան մերժումը
պէտք չէր այսպէսների այցուածուիլ, իրը թէ պանուլին,
մայրապեսներու ձեռաց տակ կը թուութիւն առած
ըլլալուն պատճառաւ կը խորշէր ան ամուսնութեանէ:
Կը ձանչնանք երկարամեայ փորձառութեամբ այս-
պիսի կրթուածներ, որոնց ուշն եւ ուրուցը կը կեն-
դրոնայ ամուսնանալու վրայ, կարծես հաստա-
տելու համար անգամ մըն ալ՝ մարդաճանաչ Պաւ-